զէնս յԱստրիս՝ և 'ի կողմանս Բերիոյ 'ի դաշտին Տապէ կո-
չեցեալ, երկոքին հզօր բանակքն պատահեցան միմեանց,
խորտակեալ ցրուեցան Եգիպտացիք 'ի ստէպ յարձակմանէ
հրանօթից, և Ղուրի անկաւ 'ի ճակատի անդ։ Սէլիմ տա-
բածեաց զզէնս իւր 'ի Պաղեստին՝ և հասեալ 'ի Ռեմլէ բա-
նակեցաւ անդ, և էլ յԵրուսաղէմ յուխտ ընդ մեծամեծս
իւր, յամսեանն Դեկտեմբերի յորում ինքնէր յորդ անձ-
րեւ, և անտի չոքաւ 'ի Քեբրոն, եւ վերստին դարձաւ 'ի
բանակն, և իբրեւ պատրաստէր 'ի չու՝ խաղալ 'ի սահմանս
Եգիպտոսի, առաջի եղ նմա մի ոմն 'ի նախարարաց զդը-
ժուարութիւն ճանապարհին անջրդի անապատին, բար-
կացեալ Սէլիմայ ընդ բանս նորա, ետ հատանել զգլուխն,
եւ ինքն հորդան ետ զօրօքն։ Իսկ Թուման Պայի եղբօր
որդի Ղուրիայ, թագաւորեալ յԵգիպտոս՝ էլ բազմութեամբ
զօրաց 'ի կողմանս Ղազզէի, եւ բանակեցաւ ընդդէմ Օս-
մանցւոց, և նախ քան զտալ նշան մարտին· ընտրեաց զարս
երիս 'ի քաջաց իւրոց, որք էին արք կորովիք ամրացեալք
երկաթապատ զրահիւք· եւ յարձակեալ նոքօք ճեղքեաց
զկարգ զօրացն Օսմանցւոց, և անցեալ եհաս 'ի վրան ար-
քային· և տեսեալ զՎեզիրն մեծ Սինան Փաշայ՝ կարծե-
լով թէ նա ինքն Սէլիմ իցէ, եհար զնա եւ տապալեաց
անդ· սպան նաեւ զդանճապետ արքային, եւ 'ի յաղմկի
անդ իբրեւ գիտաց թէ չհասին զօրք իւր զկնի՝ և ինքն պա-
շարի 'ի վտանգի, փախուցեալ էլ անտի՝ եւ դէմ եդեալ
դնաց յԵգիպտոս իւրովքն հանդերձ։ Իսկ արքայն Սէլիմ
կարգ եդեալ Եէնիչերի զօրաց՝ դիմեաց 'ի սահմանս Եգիպ-
տոսի, և եհաս 'ի Գահիրէ քաղաք· եւ յետ արիւնահեղ
պատերազմաց զոր մղեաց ընդդէմ Բեդէվիներ, տիրեաց բո-
վանդակ երկրին, և ձեռբակալ արարեալ զԹուման Պայի
ետ հանել 'ի կախաղան 'ի Գահիրէ 'ի դուռն Պապ Զուէյլ կո-
չեցեալ՝ ուր ընկալաւ զանուն փոխանորդի Մարգարէին,
ժառանգելով զանուն Խալիֆայութեան· և կարգեալ կու-
սակալս և վարիչս երկրին, ինքն դարձաւ 'ի Ղազզէ և անտի
'ի Դամասկոս, ուր հանդիպեաց ետ զօրաց ամիսս ինչ,
եւ երկրորդ անգամ եկն յԵրուսաղէմ, ընդ առաջ ելին
նմա բնակիչք քաղաքին և Պատրիարքունք Հայոց և Յու-
նաց հանդերձ միաբանութեամբ իւրեանց· էին ընդ Սէ-